«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ (Պ-298-13.06.2022-ՏՀ-011/0) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծով (այսուհետ՝ նախագիծ) նախատեսվում է փոփոխություններ կատարել «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» օրենքի (այսուհետ՝ օրենք) 3-րդ հոդվածում:

Օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ստուգման հրամանի կամ հանձնարարագրի երկու օրինակը, ***ստուգումն սկսելուց առնվազն 3 աշխատանքային օր առաջ***, պատշաճ ձևով (առձեռն կամ փոստով) ներկայացվում է տնտեսավարող սուբյեկտի ղեկավարին կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին:

Միևնույն ժամանակ՝ օրենքի 3-րդ հոդվածի հիշյալ մասով սահմանված են վերոգրյալ կարգավորումից բացառություններ:

Նախագծի 1-ին հոդվածի 2-րդ մասով նախատեսվում է օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված ծանուցման կարգից որպես բացառություն լրացնել նաև առողջապահության ոլորտում և աշխատանքային օրենսդրության նկատմամբ վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի կողմից իրականացվող ստուգումները:

Նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ներկայացնում է հետևյալ դիտարկումը՝

Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 1902-Լ որոշման 1-ին կետով հաստատված N 1 հավելվածի համաձայն մինչև 2024 թվականի դեկտեմբերի 1-ին տասնօրյակ նախատեսված է «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» օրենքում փոփոխություններ և լրացում-

ներ կատարելու մասին» օրենքի նախագծի ներկայացում կառավարության հաստատմանը, որով նախատեսված է նաև ծանուցվող և չծանուցվող ստուգումների տեսակների վերանայում և հստակեցում:

Հաշվի առնելով վերոնշյալը, առաջարկում ենք հատվածական լուծումներով փոփոխություններ չնախատեսել «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» օրենքում:

Այդուհանդերձ, հիմք ընդունելով օրենքի նախագծին կից ներկայացված հիմնավորումները, առաջարկում ենք՝

1. «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 1-ին հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2) 3-րդ մասի «Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից» բառերը փոխարինել «աշխատանքային օրենսդրության ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի կողմից» բառերով:»:

Ներկայացված առաջարկությամբ պայմանավորված նախագծի 1-ին հոդվածի 3-րդ մասն առաջարկում ենք հանել: